567 Հիսո՛ւս, ներկա ես այս հարսանիքին,

1. Հիսո՛ւս, ներկա ես այս հարսանիքին,
Օրհնի՛ր, խնդրում եմ, Դու այս զույգին,
Թող Քո օրհնությամբ այստեղից գնան,
Բայց միշտ Քո սիրող ձեռքերում մնան:

Հիսուսի հետ (2),
Ապրեն հավերժ Հիսուսի հետ:

2. Պաշտեն միայն Քեզ ու փառաբանեն,
Քո սուրբ խոսքերով միշտ առաջնորդվեն,
Լսեն Քո ձայնը, հնազանդ լինեն,
Սիրեն միմյանց և իրար ներեն:

3. Թե դժվարություն պատահի կյանքում,
Միայն Քեզ հուսան ամեն պարագայում,
Սովորեն Քեզնից, լինեն միշտ բարի,
Լինեն լույս, աղ, համը աշխարհի:

4. Ընդունեն որբին, հոգան աղքատին,
Սիրեն մանկիկին, հյուրասեր լինեն,
Քո ճանապարհից երբեք չշեղվեն,
Քո սուրբ խոսքերը մարդկանց վկայեն: